

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԱԶԳԱՅԻՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԹԵՐԹ

ՌՅԿԷ

Հ Ա Տ Ա Ր

Հ Ե

1917

ՅՈՒՆՈՒԱՐ

Թ Ի Ի 1

Ս.
ՂԱԶԱՐ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ ՏԵՂ

Հ Ա Յ Հ Ա Ն Ճ Ա Ր

Ո՛ր ես Հայ հանճար. — անցե՛ր ես անցեր...
Հին և երկայն զարթ այլևայլ բողոքով
Մեր Հայ հայրենեաց վրայեն սահելով՝
Սև ու սրգիտակ քոչերով դասեր
Չագուտն այն ծածկեր
Անցե՛ր են անցեր.

Ն ՈՐ տարուոյս արշալոյսին, Հայ կեանքի աննախընթաց մեծ տրա-
մին կարմիր վարագոյրը չամփոփուած, Ամմահ Նախապետին անմահական
ՀԱՅ ՀԱՆՃԱՐ վերճանելով, սարսուռ ի սրտի, թախծալից հաւաչանք մը
կ'արծակուի մեր կուրծքէն.

Անցան մարեցան արեմն հայ լուսեր...
Ա՛հ, Հայաստան, ո՛ր քո փառքն փայլուն.
Ո՛ր քո ճարտարաց աշխատանքն անհուն.
Ո՛ր քաջ և գիտուն սրբուցող արդիւնքներ.
Ո՞նց քո բիւր փառքեր
Անցե՛ր են անցեր...

Եւ սակայն բովանդակ Եւրոպայի միլիոնաւոր ազգաց թնդանօթներու
որոտմանց, ամբողջ մարդկութեան խժոժական եղբերգութիւններու այս
շրջանին՝ համայն ազգերու Մամուլը կը ճունչէ, եւ ողորյնը կ'ուղղէ եկաւոր
Նոր Տարւոյն:

*
* *

Այո՛, հայկական Մամուլին երիցագոյն ակոյեանն՝ Բազմավէպն ալ լծէ եւ

« Սիրտըն յերկուս է ճրդթած, և ցաւերն, ո՛հ, զանազան »

սակայն, ունի խօսք մը, ունի լաւագոյն մտղծանք մը Հայունեան...
Հայ ոգիին, Հայ Հանճարին ուղղուած...:

Էւ կ'ողջունենք Նոր Տարին... ո՛հ, քանի՛ յոյսեր, քանի՛ պատրանքներ քօղարկուած են՝ առաջիկայ Նոր ամիսներու ծայքերուն մէջ...:

Ներկայ ձմեռուան սարսուռներուն մէջ, կը դողդոջէ Ազգերու գոյութիւնը. եղեամի շիծը՝ ցս մըսած Ֆիւլերէն կը վարանի վար հոսիլ, զի հո՛ն կը տեսնէ իր մահը, եւ սակայն կանխի մ'է. եւ ազգութիւններ կը մաքառին իրենց գոյութեան պահպանումին համար, եւ ցեղեր կը ճգնին համայն մապդկութեան ցուցնելու իրենց լուսարփի Հանճարները:

Հինը կը բաժնուի, կը հեռանայ՝ տանելով վայրագօրէն Ազգի մը արցունքը, արտաքին զանգուածը. բայց արդեօք կրնայ տանիլ անոր Հոգին, անոր Հանճարը... — Ո՛չ:

Հինը կը կորսուի, եւ Նոր Տարուան հորիզոնին վրայ սակայն, Նոր արեւուն շամանդաղը կը բարձրանայ, ու կը ծածկէ Նրբախիւս քօղով մը՝ Ապագան:

Մենք՝ այսօրուան մագապուրծ Հայերս՝ Մնացեալին եւ Ապագային մէջտեղ կանգնած, կը կռուինք, կը ճգնինք, միակ նպատակի ակնդէտ, սեւեռեալ գաղտփարականով մը կը մաքառինք՝ պահել պահպանել մեր գոյութեան իրաւունքը, ու կը շեշտենք.

Բզօճ գիրն Հայոց՝ կարգացէ՞ք ազգեր.

— *« Կարկառ հանգըստեան տոհմի տան Հայկայ.*

Համարի նոց մեռեալս և ինքն ի քուն կայ »: —

Մեռեալ չեն ուրեմն Հայ հայրենիք մեր.

Հայաստան անկեր՝

Բայց ո՛չ է անցեր:

Հայկական օճախը մարելու կը ճգնին...: Ունայն եղեռնագործութիւն: Բաւ է պահել պահպանել անոր սրբազան կայծը. այդ կայծը կրկին պիտի բորբոքէ, պիտի հրդեհէ Հայունեան օճախը, պիտի լուսաւորէ մեր Բնաշխարհը. եւ այդ հրաշագործ կայծը « Հայ հանճարն է »:

Հայրենեաց սարերէն եւ ափունքներէն հեռու, օտար աստեղաց տակ՝ ապաւէն գտած հայորդւոց պարտքն է օտար օդոց մէջէն ծծելով քաղաքակրթութեան նեկտարը, փոխանցել զայն հայ սերունդին. եւ ըստ Հայրենեաց Նահապետ Ալիշանի, առնենք նաեւ Գիտութեան արեգակէն սրբազան հուրը եւ լուսաւորենք մութ արամետները, վառենք ՀԱՅ ՀԱՅՁԱՐը:

*
* *

Հայ հանճարը՝ ռամփիրան պիտի ըլլայ ազգասիրական եւ հանրագիտական գաղափարականին. պիտի գիտնայ ցոյց տալ Եւրոպոյոյ, Ամերիկոյ, Եգիպտոսի եւ համայն հայրրդւոց, կազմակերպուիլ՝ բարեգործական, կրթական, ուսումնական հաստատութիւններ ստեղծել, ու պանծացնել Հայ հանճարը. անոր կենսառիթ հուրը ծաւալելով ամէն կողմ՝ ըստ Նախապետի յորդորանաց.

*« Հանճարն է մեզ կեանք. ըզնա՛ վառեցէք,
Մեծ պատիկ՝ այտոր սիրով վառուեցէք... »:*

Ասով մեր գոյութեան մակոյկը՝ կործանասպառ վիթխարի կոհակներուն դէմ՝ պատուար պիտի կանգնի, եւ փրկութեան փարոսը պիտի առաջնորդէ մեզի ու ո՛չ ոք պիտի բռնէ՝ այլ եւս մեզ.

*« Հայ ազգ, հայ հանճար, քունն է զքեզ բռներ.
Քունն թանձր և երկայն »...*

այլ ընդ հակառակն Նահապետի հարցմանց եւ յորդորանաց թէ,

*Ո՛վ բանայ զՀայկայ՝ աշխոյժ աշուկներ.
Ո՛հ, մի կանգնէ զքեզ, հանճար հայրենի...
Ն՛լ, կանգնէ՛ դու զքեզ, զաւակ ես երկնի.
Լ՛ոյս ծագէ մըթէդ, ն՛լ կանգնիր ի վեր.*

հրճուանօք եւ պանծանօք պիտի պատասխանենք մենք՝ մեր ազգին գիտակից բեկորները, թէ մահէ եւ սուրէ մազապուրծ՝ մեր եղբարց ձեռք կարկառող, խրախոյս տուող, յոյս եւ լոյս ներշնչող մենք եղած ենք:

Ուղըն՛ըք, ուրեմն մեր այքերը « Հայ հանճարին », դնենք մեր արիւնը, մեր սիրտը, մեր զգացումները անոր ոգւոյն մէջ, եւ ամա՛ զօրացած՝ ընդհանուր մարդկութեան հոսանքին մէջ պիտի մանչցուի՛նք գոյութեան արժանի ազատ Ազգ մը:

Այս է մեր մաղթանքը բոլոր մեր ընթերցասէր ազգայնոց, եւ մեր հաստատուն որոշումը առաջիկայ տարուանս ընթացքին մէջ, յիշելով ու յիշեցնելով թէ,

*Կ՛երդնու Նահապետ, կանչէ ձեզ Հայե՛ր,
Հանճարն է մեզ կեանք. ըզնա՛ վառեցէք,
Մեծ պատիկ՝ այտոր սիրով վառուեցէք...
Երագէ՛ Հայ հանճար, փայլէ՛ բիւր բոցեր,
Իմանան ազգեր՝
Թէ Հայք չեն անցեր:*

Հ. Ն. ՄԻ.